

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՄԵԾ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ
«ԱՂՂԱՐԱՐՈՒՄ»

Մ. Մ. ԱՍԼԱՆՅԱՆ

Հայ իրականության մեջ XVIII դ. ֆրանսիական մեծ հեղափոխության առաջին տպագիր արձագանքները երևացել են «Աղղարարում» (Մադրաս, 1794—1796)։ Այստեղ են տպագրվել առաջին հաղորդագրությունները մեծ հեղափոխության անցուղարձերի մասին, հիշատակվել հուլիսի 14-ը, Բաստիլի բանտը, հեղափոխության գործիչներ Ռոբեսպիերը, Միրաբոն, Լաֆայետը, «յակոբինյան», «կոնվենտ», «գիլյոտին» և այլ բառեր։

«Աղղարարը»՝ առաջին հայ պարբերականը, սկսել է լույս տեսնել Ցալոթինյան դիկտատուրայի անկումից, Տերմիդորի 9-ից (1794 թ. հուլիսի 27) երկու և կես ամիս հետո՝ 1794 թ. հոկտեմբերի 16-ից, երբ փաստորեն ավարտվել էր հեղափոխության ժամանակաշրջանը և Ֆրանսիան թևակոխել էր եվրոպական միապետների կոալիցիոն ուժերի դեմ մղվող պատերազմների փուլը։ Այսուհանդերձ, ամսագրի խմբագիր Հարոսթյուն Շմավոնյանը և նրա գործընկերները հարկ են համարել անդրադառնալ ֆրանսիական հեղափոխության վերջին փուլի (1793—1794 թթ.) անցքերին և դրանք ընթերցողներին ներկայացնել հետաքրքիր ժամանակաշրջանին վերաբերող եվրոպական լուրերին։

Անկասկած, ֆրանսիական հեղափոխության մասին հայերը լսել էին «Աղղարարի» երևան գալուց առաջ էլ, սակայն հատկապես բուն Հայաստան հասնող լուրերը եղել են ալնքան անորոշ և աղոտ, որ նույնիսկ 1798 թ. կաթողիկոս Ղուկաս Կարնեցին ուսահայ թեմի առաջնորդ Հովսեփ Արղուսյանին ուղղած նամակում գրել է «...նրանց (ֆրանսիացիների—Մ. Ա.) աղանդի կամ քաղաքական ծեսերի մասին ոչ մի ստույգ բան չենք լսում մեկից։ Եթե այդտեղ հավաստի բան կա նրանց մասին, խնդրում ենք իմաց տալ»¹։ Այս իմաստով հնդկահայերը թերևս ավելի նպաստավոր պայմաններում են գտնվել։ Ֆրանսիական հեղափոխության մասին բանավոր լուրերից բացի, որ բերում էին հայ վաճառականները և Եվրոպայից ժամանած այլ անձինք, կարևոր տեղեկություններ են պարունակել և Արղուսյանի՝ հնդկահայությանը հղած ուղերձները։ Սակայն ավելի ճշգրիտ և բազմապիսի նյութեր նրանք քաղել են Հնդկաստանում լույս տեսնող անգլիական մամուլից, որպիսիք էին «Կալկաթայի լրագիրը» (1784—1823), «Մադրասյան լրագրերը» (1790—1792), «Հնդկական մեկնաբանը» (1793—1794), ինչպես նաև Անգլիայից ստացվող պարբերականները։

«Աղղարարում» հիշատակվում են «Արևելքի աստղը» (Օրինենթալ սթար) և «Մադրասյան լրագրերը»։ Սակայն, որպես կանոն, լուրերի ստույգ աղբյուրները չեն նշվել։ Սովորաբար սահմանափակվել են ընդհանուր բնույթի վկայակոչումներով՝ «Անգլիական թերթերից», «Էնգլանդի լրագրերից», «Վալկաթայի լրագրից իմացանք», «Մադրասյան լրագրերից», «Ջանադան լուրեր»՝ տպագրված Կալկաթայում և արտատպված առանց կետ մի փոփոխության² և այլն։ Մի դրից ավելի Հնդկաստանում անգլիացիների հետ շփվելու հետևանքով հնդկահայերը XVIII դարի վերջին արդեն զանգվածաբար սկսել են առնչվել անգ-

1 Դիվան հայոց պատմության, գիրք Դ, Թիֆլիս, 1899, էջ 251։

2 Այս վերջինը տե՛ս Աղղարար, 1795, № 8, էջ 204։

լերենին, իսկ նրանցից առավել գրագետները կարգում էին անգլերեն գրքեր և լրագրքեր:

Երբեմն լուրերի հակասական բնույթը դժվարացնում էր կողմնորոշվելը. «Թէ եւ յամենայն այս հրատարակեցաւ զանազան լուրք Յեւրօպիաւ, սակայն այնքան կերպ զկերպ խօսին, մինչ զի ապշիմք, թէ զորն արդյոք ձեռն արկ-ցուք ընծայել ՅԱզդարարոցս...»³:

Որոշ հաղորդումներ ուղեկցվել են ամսագրի աշխատակցի պարզաբանումներով՝ «Մաղկաքաղ լուրք կազեթաց, հանդերձ նախերգանօք ի թարգմանչի սոյն լրոյս առ ընթերցողս»⁴: Այսպիսով, անգլիական պարբերական մամուլի միջոցով հնդկահայ լրագրողները հնարավորություն են ունեցել գաղութահայությանը հաղորդակից անել եվրոպական, հատկապես ֆրանսիական քաղաքական անցուղարձեփին: Իսկ անգլիական մամուլը լի էր ֆրանսիական հեղափոխության մասին նյութերով:

Ֆրանսիական հեղափոխությունը առաջին իսկ օրից բուռն հետաքրքրություն էր առաջացրել Անգլիայում: Պառլամենտական ճառերում, քաղաքական պամֆլետներում, երգերում, բանաստեղծություններում հնչում էին այն ձուլերի և հայացքների արձագանքները, որ հռչակում էին ֆրանսիացիները: Հեղափոխական Ֆրանսիայի հանդեպ տածած համակրանքը, հատկապես արմատական մտավորականության շրջանում հսկայական էր: Այստեղ սկզբում հակված էին ֆրանսիական հեղափոխությունը ընկալել որպես XVII դ. անգլիական հեղափոխության մի նոր կրկնօրինակը: 1789 թ. «Հեղափոխական ընկերություն» նիստում արտասանած ճառում նշանավոր արմատական դոկտոր Պրայսը ասել է. «Եղեք սրտով արի, ազատության բարեկամներ, մարդու իրավունքի պաշտպաններ... Տեսեք, թե ինչպես են ձեր լուսավորած երկրները արթնանում, ինչպես են նրանք խորտակում իրենց շղթաները և արդարություն պահանջում: Նայեցեք ձեր վառած ջահին, այն ազատագրել է Ամերիկան, այն իր հրե ցուքերը գցել է Ֆրանսիայի վրա, ուր նրանից բոցավառված կրակը մոխրացնում է բռնակալությունը, ջերմացնում և թարմացնում է նվրդանք»⁵:

Այդ տարիներին հեղափոխական բանաստեղծություններ են գրել Ս. Քոլրիջը և Ռ. Սաութին, որոնք յակոբինյան դիկտատուրայի տարիներին երես դարձրին հեղափոխությունից: Ռ. Բյորնսը ողջունել է ֆրանսիացիներին և գովերգել «Ազատության ծառը», որը տնկել են Բաստիլի տեղում: Սակայն Յակոբինյան տեռորից հետո իրավիճակը փոխվեց: Անգլիական պառլամենտարիզմի ջատագովները դատապարտեցին ֆրանսիական հանրապետության ճգնաժամային իրավիճակում յակոբինյանների կողմից սահմանադրության կիրառումը հետաձգելը և այն հեղափոխական դիկտատուրայով փոխարինելը: Այդ պահից Ֆրանսիայի հանդեպ տածած համակրանքը անգլիական կառավարությունն սկսեց ընկալել որպես վտանգ, և նա եռանդուն պայքար ծավալեց այն ամենի դեմ, ինչը կարող էր անգլիական յակոբինականություն կոչվել: Այնուամենայնիվ, ֆրանսիական հեղափոխությունը XIX դ. բոլոր քաղաքական բանավեճերի հիմնական թեման դարձավ և բոլոր տեսակի պատմական, բարոյախոսական, փիլիսոփայական, գրական խորհրդածությունների անխուսափելի ֆոնը: Միապետականները ջանում էին հեղափոխությունը ներկայացնել որպես դժբախտ դիպված, իսկ բուրժուական ընդդիմադիր կուսակցությունները ապացուցում էին հեղափոխության օրինաչափ լինելը, ցույց էին տալիս նրա պատմական խորը արմատները, ջանում էին նրա ակունքները ի հայտ բերել ժողովրդի դարավոր ձգտումներում:

³ Նույն տեղում, 1795, № 14, էջ 548:

⁴ Նույն տեղում, № 6, էջ 94:

⁵ М. П. Алексеев, Из истории английской литературы. М.—Л., 1960, с. 257—258.

Ֆրանսիական հեղափոխությունը խթանեց հակաֆեոդալական, բռնատիրական կարգերի դեմ պայքարի աշխուժացումը ամբողջ աշխարհում: Պառլամենտական բարեփոխումների համար մղվող պայքարը Անգլիայում, աղասադրական պատերազմի հաղթանակը Ամերիկայում, հեղափոխությունը Ֆրանսիայում, ինչ խոսք, անհետևանք չանցան հնդկահայ գործիչների համար և նպաստեցին ազատագրական գաղափարների տարածմանը հայ գաղթօջախում: Ազատագրական շարժումները Եվրոպայում և Ամերիկայում ոգևորում էին և հուսադրում, Եվրոպայից եկող լուրերին նրանք սպասում էին անհամարերորթյամբ, «Ազդարարը» գրում է. «Բազմապապակ ծարավամբ սպասելով զլուրս Եվրոպայի...»⁶:

Հեղափոխական Ֆրանսիայի մասին տեղեկությունների հանդիպում ենք ամսագրի հենց առաջին համարում զետեղված Արդությանի՝ 20. 6. 1793 թ. թվակիր ուղերձում: Արդությանը հաղորդում է Լյուդովիկոս XVI-ի մահապատժի մասին, որը, նրա որակումով, «խալտառակություն և անպատվություն» է ի կատար ածվել: Նա տեղեկացնում է նաև, որ թագավորի եղբայրը՝ կոմս դ'Արտուան⁷, եղել է Պետերբուրգում և ջերմ ընդունելության արժանացել Նկատերինա II-ի կողմից և իր ուղեկիցների հետ այցելել է հայկական եկեղեցի⁸: Ֆրանսիայում տեղի ունեցող դեպքերը Արդությանը անվանում է «սարսափելի և դառնադեմ»: Արդությանը գրում է և այն մասին, որ ստեղծված քաղաքական իրավիճակից մեծապես տուժում է Եվրոպայի հետ առևտրով կապված հայ վաճառականությունը:

Արդությանը Ֆրանսիական հեղափոխության մասին ավելի հանդամանորեն արտահայտվել է իր երկրորդ ուղերձ-նամակում⁹ (1794): Այստեղ խոսվում է հանրապետության կրոնական քաղաքականության մասին. «Ֆրանսիայից ազգն նիւթ առին զաւելորդապաշտութիւնն, պապիցն Հռոմաց: Նախ զպատկեր պապին զարդարեցին քահանայական զգեստիւք իբրև արձան, ապա խորտակեցին ՚ի հուր այրեցին և ...աղաղակեցին, թէ զերծաք ի նորին գարշաւթեանցն»¹⁰, Եթե Ֆրանսիացիների հակապապական ելույթները Արդությանը ի տես է դնում այն հայերին, որոնք հակված են կաթոլիկություն ընդունելու, ապա կշտամբանքով է խոսում ձախ յակոբինյանների վարած ընդհանրապես հակակրոնական գծի մասին. «Բարձին զկարգս քահանայական, ...եպիսկոպոսունս և զքահանայս զոմանս ի սուր մաշեցին, զոմանս արտաքսեցին, և որք հնազանդեցան աղանդոյ իւրեանց, զնոսա յաշխարհ մուծին և ամուսնացուցին. եպիսկոպոսունս և զքահանայս և զոմանս յեպիսկոպոսաց և ՚ի քահանայից սոսկ սաղաթ արարին... և եկեղեցիս գեղեցիկաշենս այրեցին ի հուր զսրբութիւնս, անհետ արին ՚ի Ֆրանցիոյ զանոն քրիստոնէութեան, ոչ գոյ մըկրտութիւն, ոչ պսակ և ոչ օրինաւոր թաղումն ննջեցելոց. այլ ով որ կամի ամուսնանալ մեկ դատաստանատան ձեռ կդնեն վատոյով (վետո—Մ. Ա.) ընկայուն. մեկ աղանդ գոյ յակոբեանց, այսինքն՝ աղանդ Յակոբայ, որ զօրացեալ է յոյժ և նա առնէ զանօրէնութիւնս այս»¹¹:

Գիտենք, որ 1798 թ. աշնանը յակոբինյանների շարքերում պառակտում առաջացավ: Ձախ յակոբինյանները, Շոմետի և Էբերի կողմնակիցները (էբերականներ) կրոնական քաղաքականության հարցում լուրջ տարաձայնություններ ունեին Ռոբեսպիեռի հետ: Նրանք «ապաքրիստոնեացում» էին պահանջում, այսինքն, փակել եկեղեցիները, կրոնականներին ստիպողաբար կոչումից հրաժարեցնել և այլն: Սակայն դա ժողովրդի, մանավանդ գյուղացիության դիմադրությունը հանդիպեց և դադարեցվեց: Արդությանին հասած լուրերը այս մասին, անշուշտ, նրան վրդովել են:

⁶ Ազդարար, 1794, № 1, էջ 21:

⁷ Շարլ դ'Արտուան, կոմս (1824 թ.՝ Ֆրանսիայի թագավոր Կարլոս X):

⁸ Ազդարար, 1794, № 1, էջ 21:

⁹ Նույն տեղում, 1795, № 2, էջ 92—94:

¹⁰ Նույն տեղում, էջ 92:

¹¹ Նույն տեղում:

Մյուս թեման միապետության տապալումն է։ Արդությանը գրում է՝ «Ապա զհետ անկան թագաւորին իւրեանց և պէսպէս պատճառաւոր բարուրանս կուտեցեալ 'ի վերայ նորա՝ կամեցան յիշխանութենէ մերժել, վասն յայսմ նախ փախաւ 'ի յերկրէն իւրով թագուհեան և զաւակօքն սահմանի երեանդ կայեալ կալանաւորեցին, վերջապէս գործիք իմն սպանման կազմեցին, անպարտ մահու դատեցին և ի 1793 յունվարի 12 (իրականում՝ 21-ին—Մ. Ա.) նոյն գործօքն զգլուխ նորայ հատին անարդարաբար... և ի սոյն թուոյ հոկտեմբերի 8 նոյն գործօքն անարդարաբար ըզգլուխ թագուհւոյն հատին... երկու հազար այնպիսի գործիք սպանման կան կանգնեցեալք յամենայն քաղաքս նոցա ոչ է ի մեջ նոցա իշխան և ազնիւ, աղքատ և հարուստ, սոսկ զօրականն զօրապետ կարգեն և յետ քանի մի ատուրց և զնա ի կենաց զըրկէն»¹²։

Բնական է, որ Շմաւոնյանը չէր կարող չկիսել Արդությանի բացասական վերաբերմունքը յակոբեանների կրոնական քաղաքականութեան և տեոքրի հանդեպ։ Սակայն սա չի կարող ապացուց ծառայել այն բանի, որ «Շմաւոնյանը առանց վարանումների պաշտպանում էր ֆրանսիական ռեւոլյուցիայի հակառակորդների և թշնամիների բոլոր ռեակցիոն դրույթները»¹³։

«Ազդարարի» սեփական դիրքորոշումը ֆրանսիական հեղափոխության նկատմամբ այնքան էլ անհանդուրժողական չէ։ Հայտնի է, որ յակոբեանյան տեոքրը սարսափեցրեց և հեղափոխությունից վանեց եվրոպական շատ առաջադեմ մտածողների, քաղաքագետների, գրողների (Շիլլեր, Գյոթե, Վ. Սկոտ և այլն)։ Սկսած 1793 թ. իրենց իսկ՝ յակոբեանյանների շարքերում պառակտում առաջացավ։ Կոնվենտը, «Հասարակության փրկության կոմիտեն» դարձան իշխանության փաստացի մարմինը, տեոքրը օրակարգի մեջ մտցվեց և ընդլայնվեց բոլորությունների քաղաքականությունը հեղափոխության թշնամիների դեմ։ Ցակոբեանյանների քաղաքական հակասություններն ի հայտ եկան նրանում, որ 1793 թ. սեպտեմբերին նրանք ջախջախեցին նաև «կատաղիներին» (այդպես էին անվանում ժիրոնդիստները ժողովրդական զանգվածների տրամադրությունների արտահայտիչներին)։ Ֆրանսիական հեղափոխությունից հետո էլ երկար ժամանակ յակոբեանյան տեոքրը իր վրա է սեւեռել պատմաբանների, գրողների, հրապարակախոսների, քաղաքագետների ուշադրությունը և նրանց քննության առարկան դարձել։

Ավելի աշխուժորեն այն քննարկվել է հեղափոխությանը անմիջապես հաջորդած տասնամյակներին։ Եվրոպայում հաստատված ռեակցիայի տարիներին Շիլլին իր «Իսլամի ապստամբությունը» պոեմում (1818) տեոքրը արդարացրեց հանուն հեղափոխության փրկության։ 20-ական թվականներին՝ ազատագրական շարժման նոր վերելքի պայմաններում, որն ուղղված էր Բուրբոնների վերականգնված ատելի կարգի դեմ, երբ Ֆրանսիան գնում էր դեպի 1830 թ. հեղափոխությունը, լիբերալ պատմագրության ներկայացուցիչները նախորդ հեղափոխության ծայրահեղությունները բացատրում էին «պատմական անհրաժեշտության» տեսությամբ։ Այս իմաստով նրանց ուսուցիչն էր Թալեյրանը, որը քարոզում էր քաղաքականության՝ բարոյական նորմերից ազատ լինելը¹⁴։

Մինչև կարծում էր, որ մեծագույն հեղաշրջումը իրականացնելու համար պետք եղավ հաղթահարել շատ խոշոր դոտմներ, ինչն անհնար էր առանց «ծայրահեղությունների», որ յակոբեանյանները կատարեցին իրենց բաժին ընկած հեղափոխության «ջախջախիչ» դերը¹⁵։ Այսպիսով, «պատմական ան-

¹² Նույն տեղում։

¹³ Տե՛ս Ա. Բ. Կարինյան, Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության, հ. 4, Երևան, 1956, էջ 212։

¹⁴ Տե՛ս E. B. Тарле, Талейран, М., 1957.

¹⁵ Б. Г. Рензов, Французская романтическая историография, Л., 1956, с. 241—243.

հրաժեշտության թեզը Մինյեին և նրա դպրոցին հանգեցրեց մարդկանց և դեպքերի՝ երկակի գնահատմանը։ Նրանց կարծիքով յակոբինյանների գործելակերպը տվյալ պահին միակ հնարավորը և փրկարարն էր։ Մինևույն ժամանակ նրանք ընդունում էին, որ պատմությունը չի արդարացնի տեռորիստներին, քանի որ իրենց նպատակին հասնելու համար նրանք դիմել էին բարոյապես անթույլատրելի միջոցների։

Դարավերջին Վ. Հյուգոն իր «93 թվականը» վեպում (1874) պարսավեց և՛ հեղափոխականների (Միմուրեհեն), և՛ հակահեղափոխականների (Լանտենակ) անգիջողականությունը և արյունահեղությունները։ Իսկ Անատոլ Ֆրանսը «Աստվածները ծարավի են» վեպում (1912) պատկերելով նույն 1793—94 թվականները, յակոբինյան դիկտատուրայի անկումը դիտում է որպես տեռորի քաղաքականության հետևանք, իսկ նրան գործիք ծառայող Գամլենին՝ որպես դոգմատիկ մտածողության կրողի ու ֆանատիկոսի։ Դոկտրինյորների նշանավոր ներկայացուցիչ Գիզոն այն կարծիքին էր, որ ի տարբերություն քրիստոնեության, որը հիմնովին փոխեց մարդկանց մտածելակերպը, Ֆրանսիական հեղափոխությունը, որը քաղաքակրթության զարգացման մեջ նույնպիսի մեծագույն առաջընթաց երևույթ էր, փոխեց սոցիալական հարաբերությունները, անտեսելով բաբույաթիկական հարցերի ոլորտը։ Իսկ բարոյական կատարելագործումը, ըստ Գիզոյի, պատմության հիմնական խնդիրն է¹⁶։

Հասկանալի է, որ Շմալտնյանի՝ քրիստոնեության պատվիրանների քարոզչի համար անընդունելի պետք է լիներ զանգվածային արյունահեղությունների քաղաքականությունը։ Սպանված Լյուդովիկոս XVI-ը «Ազդարարում» անվանվում է «տարաբախտ»։ Ամսագրի էջերում արձանագրվում են յակոբինյան տեռորի փաստերը։ «Մի ի դատաւորացն Ֆրանսիսացի փախստական եղեալ հասեալ է 'ի Լեօ, ազգէ թէ յսկիսպն ջունի ամսէն 1793... 200000 անձինք սպանեցեալ են 'ի Փարիզ 'ի գուլիոտին գործիքն»¹⁷։ Հաղորդվում է, որ էլիզաբեթը՝ «քոյրն նահատակեալ Թագաւորին Ֆրանսիսոյ ընկալաւ զվճիռ մահու արիարար... նրան տարան առ գուլիոտին հանդերձ 25 անձամբ, յետ զլիսատելոյն ամենից և զլիսատեցին զարքայի քոյրն»¹⁸։

«Ազդարարի» նույն համարի «Լուրեր Ֆրանսիայից» բաժինը ամփոփում է հաղորդումներ, որոնք մեծ մասամբ վերաբերում են միջնադարյան ժամանակաշրջանին։ Պարզ երևում է, որ հայ լրագրողները ձգտել են զաղուծալայնությունը որոշ տեղեկություններ հաղորդել հեղափոխության ժամանակաշրջանի Ֆրանսիայի վերաբերյալ՝ միապետության տապալման, կրոնական քաղաքականության, սոցիալական իդեալների, ինչպես նաև տեռորի, հանրապետության իրավիճակի մասին։ Այստեղ խոսվում է Ֆրանսիայում եղած պարենային դժվարությունների, հացի պակասի մասին, «զի ամենեքեան գոլով թշնամիք, ոչ ոք յոժարի տալ նոցա ցորեան»¹⁹։ Այստեղ կան խառը կերպով տրված պատերազմական լուրեր և կռաւիցիոն ուժերի հաղթանակների և ֆրանսիական բանակի հաջողությունների մասին։

«Ազդարարի» մի շարք նյութերի հայտ են բերում և ինչ-որ ներքին, թաքուն հետաքրքրություն, թերևս համակրանք, դեպի այն նորը, որ իդ հետ բերել էր հեղափոխությունը Ֆրանսիայում²⁰։ Ի՞նչն է, օրինակ, գրգել հայ լրագրողներին հաղորդում տալու Ռոբեսպիեռի մահապատժի մասին՝ «Ռո-

16 Տե՛ս նույն տեղում, էջ 190։

17 Ազդարար, 1795, № 6, էջ 87—88։

18 Նույն տեղում։

19 Նույն տեղում, էջ 83։

20 Դա նկատել է Ա. Կարինյանը. «Շատ դժվար է ենթադրել, թե նման հաշտարար ակնարկներ ու նյութեր Շմալտնյանը կարող էր տպագրել հակառակ իր ցանկության... Ըստ երեւելի է ինքը՝ Շմալտնյանը, միանգամայն անկեղծ կերպով ձայնակցում էր վերահիշյալ ինֆորմատորներին, գործիչներին կամ վաճառական-քաղաքագետների միանգամայն նոր և արտասովոր տրամադրություններին կամ «կուրսին»։ ...Ձայնակցելով վերահիշյալ քաղաքագետ-աշխատակիցներին, նա հաշտարար դիրք էր բռնում ռևոլյուցիոն Ֆրանսիայի նկատմամբ և հակառակ իր

բելապիեռ (Ռոբեսպիեռ—Մ. Ա.) անուամբ այրն զոր կառավարէր ապստամբացն Ֆրանսիոյ, ի վերջումն սպանեալ են»²¹։ Եթե Շմալտնյանը պատկաներ ֆրանսիական հեղափոխութեան անհաշտ թշնամիներ թվին, յակոբինյանների պարագլխի նկատմամբ իր վերաբերմունքը անպայման կդրսևորեր որևէ պարսավական արտահայտութեամբ։

Ամսագրի երկրորդ համարում տպագրված է հեղափոխությունից հետո ընդունված օրացույցը, որով Ֆրանսիայի նոր թվարկությունը սկսվում էր հանրապետություն հռչակելու օրից՝ 1792 թ. սեպտեմբերի 22-ից (գործածություն մեջ է եղել 1793—1805 թթ.)։ Այն ներկայացված է «Անուանք նոր ամիսք Գալիլեացուց, այսինքն Ֆրանսիաց» խորագրի ներքո²²։ Այստեղ առաջին անգամ օգտագործված է «սանկուլոտ» բառը հեղափոխականի իմաստով²³ (ամսագրում «հեղափոխականներին» փոխարեն սովորաբար օգտագործվում է «ապստամբներ» բառը)։ «Նահանջ տարույ յաւելորդ մի օրն կոչեն լա սանկուլոտիդ ի նոյն ատուր վերակրկնելոց են զերդումն իւրեանց, այսինքն՝ ապրիցեն կամ մեռանիցեն ազատ...»²⁴։ Կարևորն այն է, որ հայ լրագրողները ցանկացել են վերարտադրել հեղափոխականների այս կոչը, որը մոտ էր հայ ազատագրական գաղափարախոսությունը ձևավորող գործիչների սրտին։

Եվրոպական միապետների կողմից ռուսների դեմ մղվող պատերազմում ֆրանսիական բանակի հաջողությունների մասին «Ազդարարը» նշել է. «...ֆուանսիս ազգն արիարար առաջանան, նա ևս Ամստերդամ տիրեալ են...»²⁵։ 1794 թ. ամռանը անգլիացիների դեմ մղված ծովային մարտի մասին «Ազդարարը» գրում է. «Թեև անկարացեալ ամենայնիւ, ջրասուզել կալան զփոյթ արիարար, քան զխոնարհիլ, Ղի թէ և յրնկղմիլ նաւոյ հասեալ զջուրս յոտից նոցայ, բայց քաջապես սրտիւք վառէին զթնդանօթս ձեռքն...»²⁶։

Լուրերն այն մասին, որ եվրոպական միապետների հակաֆրանսիական դաշինքը խզվել է, և ֆրանսիական բանակը գրավել է Բելգիան ու Հոլանդիան, որ Բազելում դաշն է կնքվել Պրուսիայի հետ (5. IV. 1795), իսկ հուլիսին՝ Իսպանիայի, որ իշխանությունը անցել է Դիրեկտորիայի ձեռքը, ուղեկցվում են ամսագրի քաղաքական տեղեկատուի զարմանք արտահայտող խորհրդածությունով, թե՛ «ի ներ մտաց առնելոյ է բանս, թէ ազգ մի զոր սպանանաց զօծեալ թագաւորն իւր, և կոտորեցին զմիմեանս, և յարուցին թշնամիս ի վերայ նոցա բոլոր Եւրոպիա, թէ որով կերպիւ առաջանայ այնքան վստահութեամբ մինչ խոնարհեցոյց ամենեսին խօսիլ խաղաղութիւն և ոմանց յարկադրեաց միաբանիլ ընդ նոսա, այժմ միայն անգլիացիք են զթշնամիս նոցա...»²⁷։

Արևելահնդկական ընկերության լուծը, որը հնդկահայ գաղութի տնտեսական քայքայմանը հանգեցրեց, և Ֆրանսիայի հաղթանակները Անգլիայի գլխավորած կողմից ռանակների դեմ, ըստ երևույթին, հայ գաղթօջախում ծնել են որոշ ֆրանսամետ տրամադրություններ։ Ամսագրում զետեղված մի թղթակցությունից տեղեկանում ենք, որ «որոշ հայրենակիցներ» առաջարկեցան կոթող, հայ հասարակության համար գալթակղիլ ուղիներ էր նկարագծում (Ա. Կարիսյան, նշվ. աշխ., էջ 213—214)։

21 Ազդարար, 1794, № 1, էջ 40։ Ռոբեսպիեռի անվան աղավաղված տպագրության հետեւանքով է, ըստ երևույթին, որ այս հաղորդումը սպրդել է հետազոտողների ուշադրությունից։

22 Նույն տեղում, 1795, № 6, էջ 74—75։

23 Թ. Ավդալրեզյանը «սանկուլոտ»-ը թարգմանել է «անվարտիք» և սրան հոմանիշ է համարում «ուղեգրմեկ», «ազդրը մերկ» բառերը (տե՛ս Թ. Ավդալրեզյան, Հայագիտական հնաաղոտություններ, Երևան, 1969, էջ 234), այսինչ, «սանկուլոտ» նշանակում է «երկարավարտիք», այսինքն, ազնվականների նման կարճ վարտիք չհագնող։

24 Ազդարար, 1795, № 6, էջ 75։

25 Նույն տեղում, 1795, № 8, էջ 210։

26 Նույն տեղում։

27 Նույն տեղում, 1796, № 17, էջ 706։

կել են տեղի (Մադրասի—Մ. Ա.) հայկական դպրոցի անգլերենի դասատուին փոխարինել ֆրանսերեն լեզվի ուսուցչով, որպեսզի «զհրահանգեսցեն մանկանս մեր զլեզուս այս»²⁸։

«Ազդարարը» պաշտպանում էր ճնշված ժողովուրդների (լեհաստան, Հնդկաստան) ազատագրական պայքարի իրավունքը։ «Ազդարարում» տպագրված առավել ծավալուն գործը «Հեյգար Ալի խանի կյանքի պատմությունն է»²⁹, որը 50—70-ական թվականներին գլխավորել է հնդիկ ժողովրդի պայքարը անգլիացի նվաճողների դեմ։ Բրիտանիայի կայունացած տիրապետության ժամանակ այս գործի հրատարակությունը բավական համարձակ հակազաղութատիրական մի ելույթ էր և պարզ է դարձնում, թե ինչու Հ. Շմավոնյանը իր ամսագրի սուղ էջերում այդքան տեղ է հատկացրել Մայսուրի զորապետի կենսագրությանը³⁰։

Լեհական ապստամբության ճնշման առթիվ, երբ վիրավոր Կոստյուշկոն դերի էր վերցվել, և հաղթանակած տերությունները 1795 թ. իրագործել էին Լեհաստանի երրորդ բաժանումը, «Ազդարարը» գրել է. «Այդ անհրջանիկ և տարաբախտ ժողովուրդը Պոդոնիա (Լեհաստան—Մ. Ա.) կորուսին ազատությունն ի թագավորութեն իւրեանց»³¹։ Լեհական պետության վերացումը, որը եվրոպական ռեակցիայի՝ հեղափոխության և ազգային-ազատագրական շարժումների դեմ ուղղված գործարքներից մեկը դարձավ, ամսագրում որակվել է որպես «ապերախտ բռնավորաց» կողմից լեհ ժողովրդի դեմ գործադրված անօրինականություն և անարդարություն։

Հնդկահայ գործիչները գիտակցում էին, որ իրենց հայրենիքը թուրք-պարսկական բռնատիրությունների լծից ազատելու լիակույր գլխավոր պայքարն է։ Հյուսիս-ամերիկյան գաղութների ազատագրական պատերազմի հաղթանակը նրանց ոգևորել էր և հուսադրել։ Բնականաբար, նրանք չէին կարող մերժել ֆրանսիական հեղափոխության կոչերը՝ «Ապրել և մեռնել ազատ», «Ազատություն, Հավասարություն, Եղբայրություն» և այլն։

Հանրապետական Ֆրանսիայի իրավական կարգի իդեալի վերաբերյալ «Ազդարարը» բավականին ճիշտ պատկերացում ուներ։ Ամսագրի հրապարակախոս «Հայրդի հայր», բանավիճելով մի այլ թղթակցի հետ, որը հանդես էր գալիս «Ազգակից» անվան տակ, գրում է. «Թե գանկատես իբր ՚ի յաւելածոյ սրտի զի ազգն մեր պատուեն զհարուստ անարժանս, և զանց առնեն աղքատ արժանաւորն... մի մեղադրեք լոկ ազգի մերոյ քանզի տեղին այն ՚ի սկզբանէ աշխարհի ընդ ամենայն տեղիս ակնածիցեն հասարակութիւնքն ՚ի աղքատէն որպէս ՚ի հարուստէ՝ մի վատաբանէր զնախնիս մեր, զի ակնկալութիւն վարձատրութեան հարստաց իւրն սեպհականաց զայն ընդ ամենայն տեղիս... եթէ կամիս զի հարուստն այնպես ընկալցի աղքատի միոյ պատուով որպէս նմանոյ իւրոյ... պարտէ քեզ դնիլ հիմն նման ֆրանսու, զի յետ պատրաստելոյ խոհարարին զկերակուրն, բազմեսցի ընդ Տեառն իւրում ի սեղանի, և լիցի հավասարութիւն ամենեցուն»³²։

Այստեղ ֆրանսիացիների հավասարության լոզունգը մեկնաբանվում է որպես իրավական հասկացություն և ոչ թե ունեցվածքային, քանզի նրանց մոտ կան և՛ աղքատներ, և՛ հարուստներ, և՛ սպասավոր, և՛ տեր։ Մարդկանց իրավական հավասարության գաղափարը, անկախ նրանց նյութական վիճակից և ռասայական պատկանելությունից, որը քարոզում էին եվրոպական լուսավորիչները և որը փորձ էր արվում իրականացնել Մադրասի ինքնավար

28 Նույն տեղում, 1795, № 9, էջ 255։

29 Յ ա կ ո Ր Ս ի մ ո ն ե ա ն, Պատմութիւն Հեյգարալի խանին (Ազդարար, 1795—1796, № 9—18)։

30 Ցավոք, «Ազդարարի» հետազոտողները այդ կենսագրության տպագրությունը երբևէ չեն դիտել որպես ամսագրի կողմից ազգային-ազատագրական պայքարի պրոպագանդի մի փաստ։

31 Ազդարար, 1795, № 12, էջ 440։

32 Նույն տեղում, էջ 428—429։

հայկական համայնքում, պարզ է, որ պետք է համակրական արձագանք գտնել «Ազդարարում»։ Հայերի համար, որոնք իրենց մաշկի վրա էին զգացել արևելյան ռոնաիրական կարգի, ապօրինությունների լուծը, անգլիական սահմանադրությունից սեփականված իրավական հավասարության գաղափարն ընկալվում էր որպես հասարակական շարիքներից ազատվելու միակ միջոց։

Այսպիսով, համակրելով ֆրանսիացիներին՝ զինված պայքարի միջոցով ռոնաիրական կարգը տապալելու համար, առաջին հայ լրագրողները միաժամանակ շնորհակալություններ ֆրանսիական հեղափոխության ժայռահեղականների գործելակերպն ու գաղափարները, որոնք ճգնաժամային պայմանների ծնունդ էին, նրանք չէին ընդունում յակոբինյանների կողմից սահմանադրությունը գործողության մեջ չդնելը, ոչ սահմանադրական միջոցներով քաղաքական պայքար վարելը և հասարակության առջև ծառացած խնդիրների լուծման եղանակները։

ОТКЛИКИ ВЕЛИКОЙ ФРАНЦУЗСКОЙ РЕВОЛЮЦИИ В «АЗДАРАРЕ»

М. М. АСЛАНЯН

Р е з ю м е

В армянской действительности наиболее ранние печатные отклики на события французской революции появились на страницах «Аздарара» (Вестник, Мадрас, 1794—1796 гг., редактор и издатель—А. Шмавонян)—первенца армянской периодической печати. «Аздарар», защищавший права угнетенных народов (армян, поляков, индийцев и т. д.) на освободительную борьбу, не мог не сочувствовать антидеспотическим устремлениям французов. Идея правового равенства людей, независимо от их сословной и расовой принадлежности, от имущественного положения, пропагандируемая французскими просветителями и республиканцами, принимается и армянскими деятелями Мадраса как панацея от всех общественных бед.

Наряду с этим «Аздарар» негативно отнесся к религиозной политике крайних якобинцев, требовавших «дехристианизации», осудил якобинский террор и политику репрессий.

RESPONSES OF GREAT FRENCH REVOLUTION IN "AZDARAR"

М. М. АСЛАНЯН

S u m m a r y

In Armenian reality the earliest printed responses upon the events of French revolution appeared in the pages of "Azdarar" (Herald, Madras, 1794—1796, editor and publisher—A. Shmavonian) the first-born of Armenian periodical press. "Azdarar", always speaking in support of rights of oppressed peoples (Armenians, Poles, Indians, etc.) for struggle of liberation, could't not sympathize with antidespotic rushes of Frenchmen. The ideas of legal equality of people, independently of their estate and race belonging, of their property condition, propagandized by French instructors and republicans, is adopted by Armenian public figures of Madras as panacea of all social troubles.

At the same time "Azdarar" treated negatively to religious policy of extreme jakobinians, demanding "antichristianizing", blamed Jakobinian terror and policy of repression.